

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N - Ա

<<ՄԻՆԱՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ>> ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ, <<ԱՐՄԵՆԻԱ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ>> ՓԲԸ-Ի ՄԻԶՈՑՆԵՐՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ <<ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ>> ՓԲԸ-Ի ՆԱԽԿԻՆ ՃԱՇԱՐԱՆԻ ԵՎ << ԳԱԼՎԱՆՈՄԵՏՐ ԳՈՐԾԱՐԱՆ (ՕՄԵԳԱ)>> ՓԲԸ-Ի ՇԵՆՔԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ

<<Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի <<է>> և 9-րդ հոդվածի <<ե>> կետերին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Թույլատրել <<Մինաս Ավետիսյան>> մշակութային բարեգործական հիմնադրամին <<Արմենիա>> միջազգային օդանավակայաններ>> փակ բաժնետիրական ընկերության միջոցների հաշվին իրականացնել <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկին ամրացված՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում ընդգրկված և պետական սեփականություն հանդիսացող, Գյումրի քաղաքի <<Էլեկտրատեխնիկական գործարան>> փակ բաժնետիրական ընկերության նախկին ճաշարանի շենքում գտնվող <<Երկանք>> ու Գյումրի քաղաքի <<Գալվանոմետր գործարան (Օմեգա)>> փակ բաժնետիրական ընկերության շենքում գտնվող <<Թել են մանուս>> որմնանկարները տեղափոխելու և վերականգնելու աշխատանքները:

2. Սահմանել, որ Գյումրի քաղաքի <<Էլեկտրատեխնիկական գործարան>> փակ բաժնետիրական ընկերության նախկին ճաշարանի շենքում գտնվող <<Երկանք>>

որմանակարը տեղափոխվում է <<Զվարթնոց>> օդանավակայանի նախագահական համալիր, իսկ Գյումրի քաղաքի <<Գավանոմետր գործարան (Օմեգա)>> փակ բաժնետիրական ընկերության շենքում գտնվող <<Թել են մանում>> որմանակարը՝ <<Զվարթնոց>> օդանավակայանի նոր ուղևորային համալիրի մեկնման սրահ:

3. <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկին ամրացված՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակում ընդգրկված և պետական սեփականություն հանդիսացող, Գյումրի քաղաքի <<Էլեկտրատեխնիկական գործարան>> փակ բաժնետիրական ընկերության նախկին ճաշարանի շենքում գտնվող <<Երկանք>> ու Գյումրի քաղաքի <<Գավանոմետր գործարան (Օմեգա)>> փակ բաժնետիրական ընկերության շենքում գտնվող <<Թել են մանում>> որմանակարները հետ վերցնել և սահմանված կարգով ամրացնել <<Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության աշխատակազմ>> պետական կառավարչական հիմնարկին:

4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին և Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, ապահովել սույն որոշման 3-րդ կետում նշված որմանակարների հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը:

5. Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարին՝ սույն որոշման 1-ին և 2-րդ կետերով սահմանված աշխատանքներն ավարտվելուց հետո՝

1) <<Արմենիա>> միջազգային օդանավակայաններ>> փակ բաժնետիրական ընկերության հետ կնքել նշված որմանակարներն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու պայմանագիր և պահպանական պարտավորագիր.

2) սույն կետի 1-ին ենթակետով սահմանված պայմանագիրը կնքելուց հետո՝ մեկամսյա ժամկետում, ներկայացնել առաջարկություն Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 3-ի N 1589-Ն և 2004 թվականի սեպտեմբերի 9-ի N 1270-Ն որոշումներում համապատասխան փոփոխություններ կատարելու վերաբերյալ:

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

<<ՄԻՆԱՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ>> ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ, <<ԱՐՄԵՆԻԱ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ>> ՓԲԸ-Ի ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ <<ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ>> ՓԲԸ-Ի ՆԱԽԿԻՆ ՃԱՇԱՐԱՆԻ ԵՎ <<ԳԱԼՎԱՆՈՄԵՏՐ ԳՈՐԾԱՐԱՆ (ՕՄԵԳԱ)>> ՓԲԸ-Ի ՇԵՆՔԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

<<Մինաս Ավետիսյան>> մշակութային բարեգործական հիմնադրամի, <<Արմենիա միջազգային օդանավակայան>> ՓԲԸ-ի միջոցներով Գյումրի քաղաքի <<Էլեկտրատեխնիկական գործարան>> ՓԲԸ նախկին ճաշարանի և <<Գալվանոմետր գործարան (Օմեգա)>> գործարանի շենքերում գտնվող որմնանկարների ամրացման, տեղափոխման և վերականգնման մասին>> Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշման նախագծի ընդունումը նպատակ ունի <<Արմենիա>> միջազգային օդանավակայաններ>> ՓԲԸ-ի՝ <<Զվարթնոց>> օդանավակայան տեղափոխելու և տեղում վերականգնելու միջոցով ամրացնել, փրկել Գյումրի քաղաքում գտնվող Մինաս Ավետիսյանի վրձնին պատկանող և ոչնչացման եզրին կանգնած <<Երկանք>> ու <<Թել են մանում>> որմնանկարները:

Նշված որմնանկարների ամրացման, տեղափոխման և վերականգնման աշխատանքները <<Մինաս Ավետիսյան>> մշակութային բարեգործական հիմնադրամի միջոցով իրականացնելը պայմանավորված է այն հանգամանքով, որ համաձայն ՀՀ Կառավարության 2010 թ. հունիսի 17-ի N 734-Ա որոշման՝ հիմնադրամը Մինաս Ավետիսյանի <<Խաչքարի մոտ>> և <<Հանդիպում>> որմնանկարները տեղափոխել է ՀՀ Կառավարության շենք և կատարել դրանց վերականգնման աշխատանքները, ինչի համար հայ և իտալացի մասնագետների կողմից տրվել է բարձր գնահատական:

ՀՀ մշակույթի նախարար

Հասմիկ Պողոսյան

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<ՄԻՆԱՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ>> ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ, <<ԱՐՄԵՆԻԱ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ>> ՓԲԸ-Ի ՄԻԶՈՑՆԵՐՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ <<ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ>> ՓԲԸ-Ի ՆԱԽԿԻՆ ՃԱՇԱՐԱՆԻ ԵՎ ՌԵԶԻՍՏՈՐՆԵՐԻ << ԳԱԼՎԱՆՈՄԵՏՐ ԳՈՐԾԱՐԱՆ (ՕՄԵԳԱ)>> ՓԲԸ-Ի ՄԱՍՆԱՇԵՆՔԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՍ ԲԱՑԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

<<Մինաս Ավետիսյան>> մշակութային բարեգործական հիմնադրամի, <<Արմենիա միջազգային օդանավակայաններ>> ՓԲԸ-ի միջոցներով Գյումրի քաղաքի <<Էլեկտրատեխնիկական գործարան>> ՓԲԸ-ի նախկին ճաշարանի և ռեզիստորների <<Օմեգա>> գործարանի մասնաշենքերում գտնվող որմնանկարների ամրացման, տեղափոխման և վերականգնման մասին>> Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշման նախագծի ընդունումը այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<ՄԻՆԱՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ>> ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ, <<ԱՐՄԵՆԻԱ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ>> ՓԲԸ-Ի ՄԻԶՈՑՆԵՐՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ <<ԷԼԵԿՏՐԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ>> ՓԲԸ-Ի ՆԱԽԿԻՆ ՃԱՇԱՐԱՆԻ ԵՎ ՌԵԶԻՍՏՈՐՆԵՐԻ << ԳԱԼՎԱՆՈՄԵՏՐ ԳՈՐԾԱՐԱՆ (ՕՄԵԳԱ)>> ՓԲԸ-Ի ՄԱՍՆԱՇԵՆՔԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՍՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՍ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

<<Մինաս Ավետիսյան>> մշակութային բարեգործական հիմնադրամի, <<Արմենիա միջազգային օդանավակայան>> ՓԲԸ-ի միջոցներով Գյումրի քաղաքի <<Էլեկտրատեխնիկական գործարան>> ՓԲԸ-ի նախկին ճաշարանի և ռեզիստորների <<Օմեգա>> գործարանի մասնաշենքերում գտնվող որմնանկարների ամրացման, տեղափոխման և վերականգնման մասին>> Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշման նախագծի ընդունումն Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում ծախսեր և եկամուտներ չի առաջացնում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

<<ՄԻՆԱՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ>> ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ, <<ԱՐՄԵՆԻԱ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ>> ՓԲԸ-Ի ՄԻԶՈՑՆԵՐՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔԻ <<ԷԼԵԿՏՐՈՍՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾԱՐԱՆ>> ՓԲԸ-Ի ՆԱԽԿԻՆ ՃԱՇԱՐԱՆԻ ԵՎ ՌԵԶԻՍՏՈՐՆԵՐԻ << ԳԱԼՎԱՆՈՄԵՏՐ ԳՈՐԾԱՐԱՆ (ՕՄԵԳԱ)>> ՓԲԸ-Ի ՄԱՍՆԱՇԵՆՔԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՇԱՀԱԳՐԳԻՌ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

<p>ՀՀ ֆինանսների նախարարություն 15.03.2011թ. N 1/4.3-2/2448-11</p>	<p>Դիտողություններ և առաջարկություններ չունի:</p>	
<p>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն 12.03.2011թ. N 03/15/1366-11</p>	<p>Դիտողություններ և առաջարկություններ չունի:</p>	
<p>ՀՀ ԿԱ քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչություն N 1.1/10.1/180-11</p>	<p>Դիտողություններ և առաջարկություններ չունի:</p>	
<p>ՀՀ Շիրակի մարզպետարան 16.03.2011թ. N 01/1025-11</p>	<p>Դիտողություններ և առաջարկություններ չունի:</p>	
<p>ՀՀ արդարադատության նախարարություն 23.03.2011թ. N 01/1691-11</p>	<p>1. Որոշման նախագծում անհրաժեշտ է նախատեսել որոշման նախագծի վերնագիրը՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի պահանջները: 2. Որոշման նախագծի նախաբանից անհրաժեշտ է հանել «և, հիմք ընդունելով «Արմենիա միջազգային օդանավակայաններ» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր մենեջերի 2011 թվականի փետրվարի 8-ի առաջարկությունը» բառերը: 3. Որոշման նախագծի 4-րդ կետում «ընդունվելուց» բառն անհրաժեշտ է փոխարինել «ուժի մեջ մտնելուց» բառերով՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջները: 4. Որոշման նախագծի 5-րդ կետի ենթակետերի համարակալումն անհրաժեշտ է համապատասխանեցնել</p>	<p>Ընդունվել են:</p>

	<p>«Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջներին: 5. Որոշման նախագծի 6-րդ կետն անհրաժեշտ է հանել՝ նկատի ունենալով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի պահանջները:</p>	
--	---	--

ՀՀ մշակույթի նախարար

Հասմիկ Պողոսյան